ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԻՎ 73 -Լ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՏՇԱՃ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՃՇԳՐՏԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը՝ 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին քվեարկությանը մասնակցող անձանց ցուցակները պատշաճ կերպով վարելու, առկա հնարավոր թերությունները հայտնաբերելու և շտկելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին՝

1) սեղմ ժամկետում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Վաղարշապատի բաժինց

ստանալ իրենց կողմից սպասարկվող ընտրատարածքում ընդգրկված և ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակները,

2) ենթակա ստորաբաժանումների ծառայողներին հանձնարարել՝ մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ը կատարել այցելություններ սպասարկվող տարածքի հասցեներ՝ ցուցակներում առկա հնարավոր անճշտությունները հայտնաբերելու նպատակով,

3) ցուցակներում առկա անձի մահվան վերաբերյալ տեղեկություններ ի հայտ գալու դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ մահվան փաստը հավաստող փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով (մահվան վկայական, մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռ, մահվան ակտի գրառում և այլն),

4) մահվան փաստը հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ մահվան վերաբերյալ լրացուցիչ այլ փաստական տվյալներ ձեռք բերելու համար (մահացած անձի հարազատի, անհնարինության դեպքում հարևանությամբ բնակվող առնվազն երկու անձի գրավոր բացատրություն, տեղեկանք՝ տրված վարչական շրջանի ղեկավարի կողմից, համատիրությունից և այլն),

5) տվյալ հասցեում բնակվող անձի անձնագրում և ցուցակում հաշվառման վերաբերյալ անհամապատասխանություններ ի հայտ գալու դեպքում կազմել արձանագրություններ՝ դրանց կցելով անձնագրի պատճենը (պատճենը վերցնելու անհնարինության դեպքում տեղում կատարել անձնագրի լուսանկարահանում),

6) ցուցակներում առկա անճշտություններ հայտնաբերելիս ամենօրյա ռեժիմով դրանք տրամադրել ՄՔԾ համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարին (կազմված արձանագրություններով, զեկուցագրերով, ձեռք բերված բոլոր փաստաթղթերով),

7) իրազեկել քաղաքացիներին այն մասին, որ եթե հաշվառված են համապատասխան ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում, սակայն չունեն քվեարկության օրվան նախորդող վեց ամսվա ընթացքում անձը հաստատող վավեր փաստաթուղթ չեն ընդգրկվելու այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Նշված անձինք ընտրություններին մասնակցելու համար քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը, քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում իրենց ընդգրկելու համար պետք է ներկայացնեն առանձին դիմում,

8) մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ը ամփոփել կատարված աշխատանքները՝ տվյալ օրվա ավարտին հետ վերադարձնելով նաև ՄՔԾ համապատասխան տարածքային ստորաբաժանումից ստացած ցուցակները:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետին՝

1) սեղմ ժամկետում կազմակերպել ՄՔԾ Վաղարշապատի բաժնի կողմից սպասարկվող ընտրատարածքում ընդգրկված և ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների տրամադրումը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՀՈԳՎ Վաղարշապատի բաժնին,

2) մահվան վկայականների կամ պետական իրավասու մարմնի կողմից տրված մահվան փաստը հավաստող այլ փաստաթղթի առկայության դեպքում մահացած անձին հանել հաշվառումից,

3) անձնագրում և ցուցակներում հաշվառման վերաբերյալ տվյալների անհամապատասխանության առկայության դեպքում քննարկել հասցեի ճշգրտման խնդիրը՝ բավարար հիմքերի առկայության դեպքում կատարելով համապատասխան ուղղումներ,

4) այն դեպքերում, երբ մահվան վերաբերյալ տեղեկությունները հիմնավորված չեն լինի մահվան վկայականով կամ պետական իրավասու մարմնի կողմից տրված այլ փաստաթղթերով, ապահովել տարածքային ստորաբաժանումների միջոցով ստացված տեղեկատվությունը 1-օրյա ժամկետում զեկուցագրով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն ներկայացումը՝ ընտրողների ցուցակներում համապատասխան ճշգրտումներ կատարելու համար:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
09.10.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ